

առ ի համբուրել զոտս նորին սրբազանս, գնացաք յերկնականագոյն պալատն նորին հրաշակերտ: Որ եւ ի տեսանելն զիս ամենամեղս, տրամադրեաց զինքն տարածմամբ շնորհածորան բազկաց իւրոց, համահանգոյն աւետարանականի Հօր, պարանոցափար գգուանօք պատեցաւ զգլխով երկրորդի անառակիս՝ գթածականաւ ողջագութեանօք: Ունէր ճշգրտիւ յայնժամ ըստ Գրոյն զահեակ նորա ի վերայ գլխոյ իմոյ, եւ զաջ նորա պատեցեալ զինեւ: Արդ ո՛հ Հայր իմ գերամեծար, ներհմտութեամբ գիտէի իսկ յառաջնմէ, մեղրաբուղիս եւ ուետնածորան գոյն ստեանց կաթուղիկէ Եկեղեցւոյ Մօր մերոյ. բայց արդենիս փորձառութեամբ իբր ի յաղբեր լիութեան ծաշեցի զամենաքաղցր փափկութիւն նորին: Նաեւ ոչ բաւականացաւ երեւելին այն Գլուխ Եկեղեցւոյ ի այնքան գգուանս, եւ ի ողջամբ բնկալմունս իւր՝ դէպ առ նւաստութիւնս իրակեցեալ: Այլ եւ ի յատկեղ նշան իւրոյ յորդագեղ սիրոյ, երիցս՝ զգագաթն իմ զմեղսատոգոր համբուրեաց: Թողլով արդէն ի բաց՝ երկարութեան սակս ի գրել, զհայեցմունս նորին գերասիրալիս, եւ խօսակցութիւնս ամենաքաղցունս եւ սփոփականս: Աստանօր եղկելով զիս աւաղ կարդացի զինէն, որպէս երբեմն սուրբն Օգոստինոս, զի յերեկոյին ծանեայ եւ այլն: Ուստի ուրեմն, ի մեծութենէ հիացմանս ի լուռ եկեալ, եւ ի սպառ յափբերանութեան մնացեալ, չունիմ զայլ ինչ բնաւ երբէք զկար խօսելոյ, եթէ ոչ յետ ծանաշելոյն իմ զիս հող եւ մոխիր՝ ասել. Օրհնեալ է եւ օրհնեալ եղիցի Տէր ի պարգեւս իւր:

Աերջսպէս, յուշ առնել Սրբազանի Հայրութեան քում զստորեւ գրեցելոցս՝ ոչ է վերջնալի: Զի համբակն այն ստահակ, եւ ասեմ իսկ թէ ստամբակ, զոր յանձնեցիք ինձ առ ի տանել ի Հօռմ, զոր եւ բերեալ աստ ըստ սակարկութեան, եւ ես յանձնեցի պատկերահան պարոն Յօհաննի-